

կաթողիկոսին զբռնութեան ծանրութիւնը չէ ըմբռնուած ի մերձուստ : 1613ին կաթողիկոսի թուղթն (թղթե՞րը) առ Պօղոս Ե. տպագրութեամբ հրատարակ հանուած է ի Հոռոմ եւ ցրուած հայաբնակ վայրեր : Կաթողիկոսի զազտնի գիւանադիտական քայլերու յայտնութիւնը անշուշտ պիտի տար առիթ իր հակառակորդներուն, նոր յարձակումներ ընելու իր վրայ : Թէ ի՞նչ տպաւորութիւն ըրաւ թուղթին ընթերցումը ժամանակակիցներու վրայ, ըստ մասնէ կարելի է տեսնել Գրիգոր Կեսարացոյ յետագայ տողերէն : Պէտք է կանխել ըսել թէ Գրիգոր Կեսարացի, որ 1601ին հեռացնելով Մելքիսեդեկը Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռէն՝ զրաւած էր զայն, եւ ունեցած էր շատ անգամ բախումներ Յովհաննէս Սուլի, վերջին անգամ Զաքարիա վանեցոյ հետ, որոնք իր դէմ մրցակիցներ էին պատրիարքական աթոռին վրայ, ի սկզբանէ անտի անհաշտ հակառակորդ մ'էր Միութեան գաղափարին. որ աւելի սաստկացաւ, երբ Զաքարիա, Հոռոմէն վերադարձին, հեռացնելով զինքը աթոռէն՝ զրաւեց զայն (1612 Ապրիլի—Մայիս) հաւանութեամբ Մելքիսեդեկի :

Յառաջերութիւնս առնուած է Գրիգոր Կեսարացոյ առ Մելքիսեդեկ ուղղուած թղթէն²³, գրուած 1614ին հաւանօրէն :

«Եւ հինգերորդ անկարգութիւն ձեր այս

²³ Հրատարակուած Գ. Վ. Սրուանձտեանցէ Թորոս Աղբար, Բ., 288—293 :